յն. προτακτός «առաջնակարգ զինուորք՝ որ առ յոյնս յառաջնում գծի բանակին կարգէին»։

Այս մեկնութիւնը յարմար չէ. թէ՛ հայերէնի և թէ վրացերէնի մէջ յն. π=պ տառը չէր կրնար շփոթուիլ մեր փ—ին հետ։ Սակայն բացի նախատառէն՝ բառին մնացեալ մասն ալ համաձայն չէ առաջարկուած յոյն ձևին հետ։

Ըստ իս փրոփրտունիկ խանգարեալ գրչութիւն մըն է և կը ներկայացնէ յն. φρουρά «պահապան զօրք, պահակ» բառին մէկ ածանցը. ինչ. φρουρητ՛ς «պահպանուած», φρουρέω «պահել, պահակ կանգնիլ, պաշտպանել, զինուորական պաշտպանութեան տակ առնել» ևն։

Սխալը յառաջացած է նօտրագիր գրութեան մէջ տ և ու ձևերուն չափազանց նմանութենէն։ Պէտք է կարդալ փրուրիտուսիկ։

Հ. ԱՃԱՌԵԱՆ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ

ՍՐԲԱՆԿԱՐՔ

ԲԻՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍԵՐԱՑ ԴՐԱՄՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Ընդհանուր Բիւզանդական կայսերք իրենց դրամոց առաջին երեսին վրայ ունին իրենց դիմանկարը, և ընդդիմակողմը՝ առաւելապէս են սրբանկարներ սկզբնատառերով և խորագրով։

Գլխաւորաբար սրբանկարք կը ներկայացնեն Յիսուս Քրիստոս՝ այլևայլ դիրքերով. Սուրբ Կոյսը՝ առանձին կամ Յիսուսի հետ. Հրեշտակ, Սուրբ, և երբեմն միայն խորագրեր (légendes), սկզբնատառեր (sigles), փակագրեր (monogrammes) և նշանագծեր (symboles)։

Յիսուս Քրիստոս

Թէոդորա կայսրուհւոյն (1054) և իրեն յաջորդներուն՝ մինչև Յովհաննէս Բալէոլոգ կայսեր դրամներուն ընդդիմակողմը նկարուած է Յիսուս Քրիստոս խաչի վրան IC–XC սկզբնագրերով։

Ալեքսիս Ա.ի (1081) դրամներուն վրայ՝ մինչև Յովհաննէս Բ. Էմմանուէլ Ա. Կոմնենոս կայսրը նկարուած է Յիսուս՝ բազմած դիրքով. իսկ ոտքի վրայ դրոշմուած կը տեսնենք զՅիսուս՝ Յովհաննէս Էմմանուէլ Ա. Կոմնենոս կայսեր դրամներուն վրայ։

Կան դրամներ որ ընդդիմակողմին վրայ ունին IC – XC սկզբնագրերս և միանգամայն KEBOHΘEI խորագրերս և Յիսուս այլ և այլ դիրքերով նկարուած. ինչպէս խաչի վրայ է Ալեքսիս Ա.ի իր Կոստանդինոս որդւով, Էմմանուէլ Ա. Կոմնենոսի դրամներուն վրայ։ Ոտնկայ կը գտնուի Յիսուս՝ Ալեքսիս Ա.ի առանձին և իր որդւոյն հետ նկարուած դրամներուն վրայ։ Յիսուս բազմած կ'երևի՝ Անդրոնիկոս ծերունւոյն դրամներուն վրայ, ուր նկարուած է երիտասարդ Անդրոնիկոսի հետ։

Ընդհանրապէս ոսկեդրամներու վրայ կայ խորագրերովս IHSYS XRISTYS REX REGNANTIVM նկարուած Յիսուս Քրիստոս՝ նմանապէս այլևայլ դիրքերով։ Յուստինիանոս Ա. կայսեր դրամներուն վրայ մինչև Կոստանդիանոս ԺԲ. Մուրմախոս՝ Յիսուս խաչի վրայ է, բացի Միքայէլ Ա.ի վերաբերեալ դրամներէն, որոնց վրայ կայ խորագիրս IHSYS

digitised by A.R.A.R.@

XRISTOS. — Վասիլ Ա.ին դրամները մինչև Մանուէլ Ա. Կոմնենոս՝ կը կրեն Յիսուս բազմած վիճակի մէջ. իսկ Թէոդորա կայսրուհւոյն և Ալեքսիս Ա. Կոմնենոսի ոսկեղրամներուն վրայ՝ Յիսուս Նկարուած է ոտքի վրայ։

Սուրբ Կոյսը

Կը գտնենք նաև բազմաթիւ դրամներ, որոնց յետակողմը դրոշմուած կայ Սուրբ Կուսին Նկարը՝ այլևայլ դիրքերով. Ալեքսիս Ա. և իսահակ Բ. Անգեղոս կայսերաց դրամներուն վրայ՝ Սուրբ Կոյսը Նկարուած է ոտքի վրայ. իր կուրծքին վրայ կը կրէ Աստուածորդւոյն մեծալը։ Ռոմանոս Դ. Դիոգինէս և Յովհաննէս Բ. Կոմնենոս կայսերաց դրամներուն վրայ՝ Սուրբ Կոյսը դարձեալ ոտքի վրայ է, բայց իր բազուկներուն մէջ բռներ է Մանուկ Յիսուսը։ Ալեքսիս Ա. Կոմնենոսի և իրեն յաջորդներուն՝ մինչև Միքայէլ Ը. Բալէոլոգ կայսրը եղած դրամներուն վրայ՝ Աստուածամայրը բազմած Նկարուած է և իր բազուկներուն մէջ կը կրէ Յիսուս մանուկը։

Հրեշտակը

Անդրոնիկոս Ա. Կոմնենոս, Անդրոնիկոս Բ. Բալէոլոգ և Միքայէլ Թ. կայսերաց դրամներուն վրայ կայ Սերովբէի մը թևատարած գլուխը. իսկ Միքայէլ Զ.ի և Իսահակ Բ. Անգեղոսի դրամոց վրայ դրուագուած է Ս. Միքայէլ հրեշտակապետը։

Սուրբք

Կան կայսերք, որ իրենց դրամոց վրայ Նկարել տուած են սուրբեր, ինչպէս Ալեքսիս Ա. Կոմնենոս և Ալեքսիս Բ. Անգեղոս՝ Ս. Կոստանդինոս. Յովհաննէս Բ. Կոմնենոս, Իսահակ Բ. Անգեղոս, Յովհաննէս Ցուկաս՝ կայսր Նիկիոյ՝ Ս. Գեորգ. Մանուէլ Բ. Կոմնենոս և Թէոդորոս Ցուկաս Լասքարիզ կայսր Նիկիոյ՝ Ս. Թեոդորոս. և Տրապիզոնի յոյն կայսերք՝ Ս. Եւգենոս։

Խորագիրք

Բացի նախընթացաբար նշանակուած խորագրերէն՝ Հերակլ Ա. և իրեն յաջորդները մինչև Յուստինիանոս Բ. քանդակել տուած են իրենց դրամոց վրայ DEUS ADIVTA ROMANIS խորագրերս։ Նիկեփորոս Ա. և իր յաջորդները մինչև Լեոն իմաստասէր՝ իրենց ոսկի կամ արծաթ դրամներուն վրայ դրուագել տուած են միայն IHSVS XRISTYS.

Սկզբնատառք

Բացի Յիսուսի Քրիստոսի (IC–XC) սկզբնատառերէն կան նաև Մարիամ Աստուածամօր սկզբնագրերս MP–ΘY.

Փակագիրք

Առաջին անգամ սկսաւ Մեծն Կոստանդիանոս քրիստոսադրոշմ փակագիրս

իր դրօշակին վրայ. իր յաջորդներէն շատեր դրուագել տուին զայն իրենց դրամոց վրայ։

Նշանագիծք

Բիւզանդական դրամոց վրայ կայ լատին կամ յոյն խաչը. առաջին անգամ սկսաւ Հերակլ Ա.։ Շատանգամներ խաչը Նկարուած կը գտնենք աշխարհագնտի վրայ թագաւորաց ձեռքը՝ Նշանակ իրենց կայսերական իշխանութեան։

Քաղուած «Բեսարիոն» Հանդէսէն ***

Տարի 1920 էջ 228

digitised by A.R.A.R.@